



**ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ՝ ՆՎԻՐՎԱԾ
ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՄԵՐԻԿԱՅԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԻՆԱԳԾԻ
ՏԱՐԵԼԻՑԻՆ**

Ծրագիրն ուղղված է Ձեր երկրում ներառական կրթության աջակցմանը

Հաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին օրինագծի (The Americans with Disabilities Act (ADA)) տարելիցին նվիրված՝ ներառական կրթության աջակցման համար նախատեսված կրթաթոշակը Հայաստանի, Ուկրաինայի, Ղազախստանի և Հնդկաստանի 28 ներկայացուցիչների հնարավորություն կընձեռի Մինեսոտայի կամ Արիզոնայի մի շարք կազմակերպություններում մասնակցելու 6-շաբաթյա խորացված կրթաթոշակային ծրագրի, որը աջակցում է զարգացման առանձնահատկություններ ունեցող երեխաների կրթության բարելավմանը: Ծրագիրը, ֆինանսավորվելով ԱՄՆ-ի Պետքարտուղարության կրթական և մշակութային հարցերով զբաղվող բաժնի կողմից, իրականացվում է Մինեսոտայի համալսարանի և Արիզոնայի պետական համալսարանի կողմից՝ համագործակցելով միջազգային գործընկերների հետ: Գործընկերներն են Հայկական պետական մանկավարժական համալսարանը /Հայաստան/, Նազարբանի համալսարանն ու Բիլիմի կենտրոնական Ասիայի կրթական կենտրոնը /Ղազախստան/, Ազգային պրեկարպատական համալսարանն ու Օդեսայի զարգացման ֆոնդը /Ուկրաինա/, և Մոնցիալական գիտությունների Թաթայի ինստիտուտը /Հնդկաստան/:

Ներառական կրթությունն իրականում ենթադրում է բոլոր երեխաների կրթությունը հանրակրթական դպրոցներում: Այն ավելին է, քան երեխաների պարզապես ներկայությունը դասարանում և ենթադրում է նրանց ակտիվ մասնակցությունը դպրոցական կյանքին առհասարակ:

Կրթաթոշակի արժանացած մասնակիցները կաշխատեն Մինեսոտայի համալսարանի և Արիզոնայի պետական համալսարանի կորդինատորների հետ՝ մշակելով մարդասիրական կրթաթոշակային նախագծեր: Այս ծրագիրը կօգնի մասնակիցներին՝ ԱՄՆ-ում ձեռք բերելու աշխատանքային փորձ, որը համապատասխանում է իրենց կարիքներին և հետաքրքրություններին: ԱՄՆ-ում փորձ ձեռք բերելուց հետո մասնակիցները կկիրառեն սովորածը իրենց երկրներում՝ ընդլայնելով ներառական կրթության իրականացումը:

Ծրագրի գործողությունները

Կրթաթոշակային ծրագրի ընթացքում մասնակիցները կսովորեն.

- Բարելավել բոլոր երեխաների կրթության որակը ներառական դպրոցներում;
- կարևորել ուսուցիչների, հատուկ մանկավարժների, մասնագետների, ծնողների (ընտանիքների), ինչպես նաև աշակերտների դերերն ու պարտականությունները ներառական կրթության գործընթացում;
- արդյունավետորեն աշխատել բազմամասնագիտական թիմերում;

- ներդնել հաշմանդամություն ունեցող երեխաների, երիտասարդների, և նրանց ընտանիքների՝ կրթական համակարգ անարգել ներառվելու արդյունավետ մեթոդներ և մոտեցումներ,
- Աջակցել բոլոր երեխաներին կրթության գործընթացում:
- ձևավորել ներառական կրթությանը աջակցող ընտանիքահեն խմբեր,
- Եվ ոչ միայն վերոնշյալը:

ԱՄՆ-ում գտնվելու ընթացքում մասնակիցները կաշխատեն և կապեր կստեղծեն հյուրընկալող կազմակերպությունների մենթորների հետ, որոնք օժանդակում են զարգացման առանձնահատկություններ ունեցող անձանց՝ ներառվելու տարբեր բնագավառներում: Մասնակիցները իրենց մենթորներից կսովորեն աշխատանքային հմտություններ, ինչպես նաև իրենց ներդրումը կունենան կազմակերպության կողմից իրականացվող ներառական ծրագրերում: Մինեսոտայում և Արիզոնայում ձեռք բերած փորձի շնորհիվ, հաշվի առնելով իրենց երկրներում ներառական կրթության համակարգի կարիքները՝ մասնակիցները կմշակեն ներառական կրթության նախագծի գործողությունների պլան, որը հետագայում կիրականացվի իրենց երկրում: Ներառական կրթության նախագծերի իրագործումը կհանդիսանա թիմային աշխատանք, որին կմասնակցեն տվյալ երկրի ներկայացուցիչները, գործընկեր կազմակերպությունը/ները և ԱՄՆ մենթորները:

Ֆինանսավորումն ու աջակցությունը

Մասնակիցները, համաձայն իրենց կրթաթոշակի, կստանան ամբողջական ֆինանսավորում, ինչպես նաև լրացուցիչ աջակցություն, ներառյալ՝

- Երկկողմանի ավիատոմսի արժեքը իրենց երկրից ԱՄՆ գնալու և վերադարձի համար:
- Մինչև Վաշինգտոն թռիչքի ավիատոմսի արժեքը՝ իրենց երկիր վերադառնալիս:
- Կեցության վայր՝ տուն կամ հյուրանոց:
- Կեցության համար նախատեսված գումար՝ սնվելու և լրացուցիչ ծախսերի համար:
- J-1 վիզայի վճարի փոխհատուցում,
- Հարցազրույցների նպատակով տվյալ երկրի ԱՄՆ դեսպանատուն կամ հյուպատոսարան իրականացված այցելությունների ճանապարհածախսի փոխհատուցում,
- Բժշկական ապահովագրություն ԱՄՆ-ում գտնվելու ժամանակահատվածի համար,
- Անհրաժեշտության դեպքում հաշմանդամության հետ կապված հարմարեցումներ,
- Տրանսպորտային ծախսեր ԱՄՆ-ում:

Ծրագրի պահանջները

Ծրագրին մասնակցելու համար ներկայացուցիչները պետք է՝

- Լինեն Ղազախստանի, Հայաստանի, Ուկրաինայի կամ Հնդկաստանի քաղաքացի:
- Լինեն երիտասարդ մասնագետ՝ 25-45 տարեկան (ծնված 1972թ. հունվարի 1 – 1992թ. հունվարի 1):
- Իրավասու լինեն ստանալու ԱՄՆ J-1 վիզա:
- Ներկայումս ընդգրկված չլինեն ԱՄՆ կրթական, վերապատրաստման կամ հետազոտական ծրագրում: Նախապատվությունը կտրվի այն մասնակիցներին, ովքեր նախկինում չեն մասնակցել ԱՄՆ կառավարության կողմից ֆինանսավորված փոխանակման ծրագրերի:
- Կարողանան մեկնել ԱՄՆ 2017թ.- ի ապրիլի կեսից մինչև մայիսի վերջը՝ 6 շաբաթով:
- Ծրագրի ավարտից անմիջապես հետո, առնվազն 2 տարով, վերադառնան իրենց երկիր:
- Գերազանց տիրապետեն գրավոր և բանավոր անգլերենին:
- Իրենց երկիր վերադառնալուց հետո ի վիճակի և պատրաստակամ լինեն համագործակցելու խմբի այլ անդամների հետ՝ իրականացնելով ներառական կրթության լայնածավալ ծրագիր:

Այլ կարևոր տեղեկատվություն

ADA ներառական կրթության կրթաթոշակային ծրագիրը մրցույթ է արժանիների համար: Այն նախատեսված է Ղազախստանի, Հայաստանի, Ուկրաինայի և Հնդկաստանի այն թեկնածուների համար, ովքեր համապատասպանում են վերոնշյալ պահանջներին: Բոլոր դիմումները կուսումնասիրվեն ընտրությունն իրականացնող հանձնաժողովի կողմից, որն իր մեջ ներառում է ներկայացուցիչներ ինչպես ԱՄՆ-ից, այնպես էլ մասնակից երկրների գործընկեր կազմակերպություններից: Կիսաեզրափակիչ փուլ անցած դիմորդները կհրավիրվեն հարցազրույցի, ինչպես նաև կհանձնեն անգլերեն լեզվի թեստ: Դիմումները կդիտարկվեն հետևյալ չափանիշների հիման վրա՝

- Համապատասխանություն ծրագրի վերոնշյալ պահանջներին;
- Մասնագիտական նպատակներ՝ ուղղված զարգացման առանձնահատկություններ ունեցող անձանց կրթության մեջ ներառմանը;
- Մասնագիտական փորձ ներառական կրթության և/կամ հաշմանդամության բնագավառում;
- Աշխատանքային փորձ հասարակական կազմակերպությունում, պետական սեկտորում, համալսարանում, դպրոցում կամ համայնքային կազմակերպություններում, որոնց աշխատանքն ուղղված է զարգացման առանձնահատկություններ ունեցող անձանց ներառմանը;
- Առաջնորդելու և համագործակցելու հմտություններ;
- Փոխանակման ծրագրի ավարտից հետո սեփական երկրում ներառական կրթության նախագծի իրականացման գաղափարներ:

Խրախուսվում է հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը ծրագրին: Կապահովվեն բոլոր անհրաժեշտ պայմանները: Ըստ պահանջի կտրամադրվեն նաև դիմումների այլընտրանքային տարբերակներ, օրինակ՝ Բրայյան գրով:

Լրացուցիչ տեղեկատվության կամ դիմումի համար խնդրում ենք կապ հաստատել Արմենուհի Ավագյանի հետ, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան (avagyan.aspu@gmail.com): Տեղեկատվություն կարող եք ստանալ նաև Բրայյան Աբերիից (abery001@umn.edu) կամ Ռենատա Տիչայից (tich0018@umn.edu), Մինեսոտայի համալսարան: Դիմումները հասանելի են և ընդունվում են հետևյալ հղումով՝ https://umn.qualtrics.com/SE/?SID=SV_8p4g2WzvZgG2G2h. Դիմումների ընդունումը կսկսվի 2016թ. դեկտեմբերի 15-ին և կավարտվի 2017 թ. հունվարի 27-ին: